Վահրիճ քայլ մը ետ առաւ դուրս ելնելու, երբ Հեղինէ՝ ձեռոք նշան ըրաւ կանգնելու, եւ դարձաւ լուրջ հանդարտութեամբ ըսաւ Գուրգէնի.

— Եթէ անմեղ կամ յիմար մէկն է այդ մարդը եւ անիրաւ տեղ մեր բանտերուն մէջ տարիով կեռեր է, պէտք է իրեն շնորհք մ'ընել եւ այնպէս արձակել: Իսկ եթէ դաւաճան եւ մատնիչ է՝ եւ կարող պատուհաս լինիլ ուրիշներու, ի՛նչ խղճմտանքով զինք կ'արձակես:

— Ոչ, անմեղ անձ ըսել կարելի չէ այդ անզգամին համար, բայց այնչափ տարի անցել է իր գործոց վրա…

— Միթէ՛ տարիներ եւ ժամանակ բաւակա՞ն են քաւել չարագործութիւնքը,— ըսաւ Հեղինէ,— եւ դառնալով Խոսրովում դու ի՞նչ կ'ըսես, հայրիկ…

Այս խօսքին Գուրգէն երկու-երէք քայլ առաւ, դռան մօտեցաւ եւ Վահրիճի թեւէն ուժով բռնելով, բերաւ սենեակին մէջտեղ կեցուց երեսը Հեղինէի դարձնելով.

— Ձիս թող, իշխանուհուոյն հետ խոսէ եւ նորա պատասխանն:

— Բայց տէր,— կ'ըսէր Վահրիճ քիթը բերանը թթուած եւ թեւը շփելով, ես զքեզ չեմ կարող բռնել,— դու զիս պէտք է թողուս:

Իսկ Գուրգէն նոյն միջոցին հեռացաւ դէպի պատշգամը եւ հորիզոնը կը նկատէր առանց բառ մը կորսնցնելու Վահրիճի խօսքերեն, որ միշտ թեւը շփելով մէկիկ-մէկիկ կը պատմէր իր որսորդութեան, Մարտիրոս վարդապետի հետ սեղանակցութեան, գինովութեան, խոստովանութեան պատմութիւնը. Գուրգէն քթին տակեն երբեմն ծիծաղելով՝ «Անպիտա՛ն ծառայ, տարիներն զքեզ ամենեւին չեն փոխէր, միշտ նոյնն ես եւ նոյն մնացել ես» կ'ըսէր կամաց ձայնով. Հեղինէ առանց փոքր ժպիտ մը ցոյց տալու, ուշադրութեամբ մինչեւ վերջը մտիկ ընելեն ետքը, ըսաւ Վահրիճի խիստ ձայնով.